ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«26» օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Կարեն Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-տնտեսագետ:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ **Ընթացակարգ**) **շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (22.08.2024թ.)՝ ժամը 14:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 23.08.2024թ.՝ ժամը 14:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ.

ա) գնման ընթացակարգը 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և գնման հայտով սահմանված են ապրանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գները՝ վերոնշյալ չափաբաժինների մասով.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
3	Համակարգչի կոշտ սկավառակ	47 709
4	Համակարգչի կոշտ սկավառակ	32 400
5	Համակարգչային ստեղնաշար	473 831
6	Ցանցային բաժանարար	531 000
7	Մալուխ համակարգչի, UTP cable 6 level	228 582
8	Ցանցային միջերեսի քարտեր	30 000
10	Օպերատիվ հիշողության սարք	226 635
12	Սնուցման մարտկոց	1 800 000
13	Անխափան սնուցման աղբյուրներ	13 800 000

բ) գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 9-րդ, 11-րդ չափաբաժինների մասով կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
ԻՄՔՐՈՒՎ ՍՊԸ	ք. Վաղարշապատ 1101, Մռավյան փ. 40Ա
Ալֆա-Էտալոն ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 29ա, բն. 37
ՔՈՄՔ ՊՐՈ ՍՊԸ	ք. Երևան Դավթաշեն, 4-րդ թաղ.,33/1 շենք, տարածք 67
ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8
Վարմէքս ՍՊԸ	Տիգրան Մեծի 46/4
ԵԼ4008 ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ս. Խանզադյան փ. 2-րդ նրբ. /56տ.
Սվետան ՍՊԸ	ք. Երևան, Ա.Ավետիսյան 1շ , բն 6
ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ	ք. Երևան, Քաջազնունի փ. 11/ 23
Հպարտ Քաղաքացի ՍՊԸ	ք. Երևան, Արաբկիր 19Փ. 4Շ. 5ԲՆ.
Էյչ Գրուպ ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
Նյու Փարթս ՍՊԸ	ք. Էջմիածին, Տեր-Գաբրիելյան 9
ՍԵԳ ՍՊԸ	ՀՀ ք. Երևան Կուրղինյան նրբ. 6 շենք, բն.32
Իքս-Արթ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի փող. 13/1
ՆԵՔՍԹ ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 33շենք, 40բն.

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	200000000	20%	240000000	20000000	20%	24000000	
2	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	200000000	20%	240000000	20000000	20%	24000000	
3	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	50000	20%	60000	50000	20%	60000	Մերժված
4	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	30000	20%	36000	30000	20%	36000	Մերժված
5	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	400000	20%	480000	400000	20%	480000	Մերժված
6	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	50000	20%	60000	50000	20%	60000	
6	Նյու Փարթս ՍՊԸ	530000	0%	530000	530000	0%	530000	
7	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	10000000	20%	12000000	8000000	20%	9600000	Մերժված
8	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	600000	20%	720000	600000	20%	720000	Մերժված
9	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	130000	20%	156000	130000	20%	156000	
9	ՍԵԳ ՍՊԸ	254800	0%	254800	254800	0%	254800	
9	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	5000000	20%	6000000	5000000	20%	6000000	
10	ՍԵԳ ՍՊԸ	548800	0%	548800	548800	0%	548800	Մերժված
10	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	3000000	20%	3600000	3000000	20%	3600000	Մերժված
11	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	5000000	20%	6000000	5000000	20%	6000000	
12	Վարմէքս ՍՊԸ	1250000	20%	1500000	800000	20%	960000	
12	Իքս-Արթ ՍՊԸ	1333000	20%	1599600	887500	20%	1065000	
12	ՆԵՔՍԹ ՍՊԸ	454500000	20%	545400000	957500	20%	1149000	
12	ԵԼ4008 ՍՊԸ	1483333	20%	1779999.6	982500	20%	1179000	
12	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	1499000	20%	1798800	1020000	20%	1224000	
12	ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ	2000000	20%	2400000	1225000	20%	1470000	
12	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	1501000	20%	1801200	1501000	20%	1801200	Մերժված
12	Նյու Փարթս ՍՊԸ	1800000	0%	1800000	1800000	0%	1800000	
12	Սվետան ՍՊԸ	1840000	0%	1840000	1840000	0%	1840000	Մերժված
13	ԵԼ4008 ՍՊԸ	11333333	20%	13599999.6	4586000	20%	5503200	
13	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	10000000	20%	12000000	4900000	20%	5880000	
13	ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ	15000000	20%	18000000	5026670	20%	6032004	
13	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	12500000	20%	15000000	5316000	20%	6379200	
13	Իքս-Արթ ՍՊԸ	8333000	20%	9999600	6816000	20%	8179200	
13	ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ	20000000	20%	24000000	7200000	20%	8640000	
13	ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ	12000000	20%	14400000	12000000	20%	14400000	Մերժված
13	Հպարտ Քաղաքացի ՍՊԸ	13000000	20%	15600000	13000000	20%	15600000	Մերժված
13	Էյչ Գրուպ ՍՊԸ	14375000	20%	17250000	14375000	20%	17250000	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է, աճուրդն ամփոփվել է 23.08.2024թ.՝ ժամը 15:30-ին, և Համակարգի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ են համարվել համապատասխանաբար՝

- 1-ին, 2-րդ, 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ն,
- 9-րդ չափաբաժնի մասով՝ «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ն,
- 12-րդ չափաբաժնի մասով՝ «Վարմէքս» ՍՊԸ-ն,
- 13-րդ չափաբաժնի մասով՝ «ԵԼ4008» ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

7.1. «Ալֆա-Էտալոն» ՍՊ, «Վարմէքս» ՍՊ և «ԵԼ4008» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

7.2. «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև 1-ին, 2-րդ, 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1. «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ

8.1.1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան, մասնավորապես վերջինս հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, վերոնշյալ հավելվածում լրացված է 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը: Հաշվի առնելով Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի ե) պարբերությունը, համաձայն որի՝ դիմում-հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում, նշված աղյուսակում «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ ընկերության կողմից լրացված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

8.1.2. Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը,

8.1.3 1-ին, 2-րդ, 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

8.2. «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ

8.2.1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

8.2.2. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

8.2.3. 9-րդ չափաբաժնի մասով ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

8.3. «Վարմէքս» ՍՊԸ

8.3.1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան, մասնավորապես թերի է նշված գործունեության հասցեն:

8.3.2. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

8.3.3. 12-րդ չափաբաժնի մասով ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

8.4. «ԵԼ4008» ՍՊԸ

8.4.1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

8.4.2. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

8.4.3. 13-րդ չափաբաժնի մասով ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. օոստոսի 28-ին՝ ժամը 10:30-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ և «Վարմէքս» ՍՊ** ընկերությունների հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով, ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **օգոստոսի 27-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

Արթուր Ասատրյան

Անդամներ՝

Խորեն Պետրոսյան

Սեդրակ Սարդարյան

Նորայր Աղամալյան

Կարեն Կարապետյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«28» օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Կարեն Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-տնտեսագետ:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պայմանների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների մասին.**

1.1.«Վարմէքս» ՍՊ ընկերությունը հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

1.2.«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ ընկերության կողմից՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման համար հրավերով նախատեսված կարգով և ժամկետում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) կցվել է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության՝ Հավելված N 1, շտկված տարբերակը, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև 1-ին, 2-րդ, 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրվել (լրացվել) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը: Ընկերության կողմից ներկայացված շտկված Հավելված N 1-ը և Հավելված N 1.3-ը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ ընկերության կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ ընկերության կողմից 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես.

ա) 6-րդ չափաբաժնի մասով Ընթացակարգի հրավերով մասնավորապես սահմանված է՝ «**16** պորտ,...», այնինչ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ ընկերության կողմից 6-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «**14** պորտ,...»,

բ) 11-րդ չափաբաժնի մասով Ընթացակարգի հրավերով մասնավորապես սահմանված է՝ «25G SFP28 պորտ՝ **առնվազն 25 հատ**...», այնինչ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ ընկերության կողմից 11-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «25G SFP28 պորտ՝ **24 հատ**...»:

1.3. Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

1.3.1. «Վարմէքս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը, այդ թվում՝ Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:

1.3.2. «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը, այդ թվում՝ Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

1.3.3. «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը, այդ թվում՝ Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի, ինչպես նաև Ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

2.1.1. ընտրված մասնակից հայտարարել համապատասխանաբար՝

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ին,
- 9-րդ չափաբաժնի մասով՝ «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին,
- 12-րդ չափաբաժնի մասով՝ «Վարմէքս» ՍՊԸ-ին,
- 13-րդ չափաբաժնի մասով՝ «ԵԼ4008» ՍՊԸ-ին:

2.1.2.

- 1-ին և 2-րդ և 11-րդ չափաբաժինների մասով այլ մասնակիցներ չկան,
- 6-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «Նյու Փարթս» ՍՊԸ-ի հայտը մերժել,
-9-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «ՍԵԳ» ՍՊԸ-ի և «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 12-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի, «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի, «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի, «ԵԼ4008» ՍՊԸ-ի, «Նյու Փարթս» ՍՊԸ-ի, «Իքս-Արթ» ՍՊԸ-ի և «ՆԵՔՍԹ» ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 13-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի, «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի, «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի, «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի, «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի և «Իքս-Արթ» ՍՊԸ-ի հայտերը մերժել,

2.2. 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի, 10-րդ չափաբաժնի մասով՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի և «ՍԵԳ» ՍՊԸ-ի, 12-րդ չափաբաժնի մասով՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի և «Սվետան» ՍՊԸ-ի, 13-րդ չափաբաժնի մասով՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի, «Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի՝ աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Խորեն Պետրոսյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Կարեն Կարապետյան

Քարտուղար՝

_____ Մարիամ Հայրապետյան